

Այլընտրանքային էներգիայի աղբյուր

Ս. ՄԱՍՅԱԸ

Շուրջ երեք տարի առաջ Հայաստանի ամերիկյան համալսարանը նախաձեռնեց «Արեային էներգիայով հովացման և ջեռուցման համակարգի նախագծում և սեղադրում» ծրագրի իրականացումը: Այն կյանքի կոչվեց «Դեր-Ինես» (Պորտուգալիա), «Իսե-Ֆրաուն-հոֆեր» (Գերմանիա), «Ինեստ Սոլար» (Ռուսաստան) և «Կոն-սակս-Ա» (Հայաստան) կազմակերպությունների համագործակցությամբ:

Այդ առիթով երեկ Հայաստանի ամերիկյան համալսարանում անցկացվեց Ենոթան-դես-սեմինար:

Ծրագիրը իրականացվել է Եվրոպական միջազգային օգիսատեխնիկական կոորդերացիայի հիմնադրամի և ամերիկահայ բարերար Սարգիս Հա-



կոբյանի ֆինանսավորմամբ: Վերջինս հայտնի է Հայաստանում բնադաժողովական մի Եարբ նախաձեռնությունների, մասնավորապես՝ «Հայաստանի թռչուններ» նախագծի իրականացմամբ:

Համակարգի բաղկացուցիչ մասերն են՝ արեային ջրասափացուցիչ հարթակների դասը, հովացման և ջեռուց-

ման համակարգը, ջրակուսակիչը և կառավարման համակարգը: Այս սեղակայանքն իր հզորությամբ և սեխնոլոգիայով միակն է ԱՊՀ մասնակից երկրներում: ԱՇխարհում իրականացված նման ծրագրերը հիմնականում փորձարարական բնույթ ունեն, իսկ այս ծրագիրը՝ նաեւ գործնական օգտակարություն, Բանի որ այն

ջեռուցում և հովացնում է Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճը:

Համալսարանի սանիտում սեղադրված 32 արեային ջրասափացուցիչ հարթակները, յուրաքանչյուրը 2 քառակուսի մետր մակերեսով (ընդհանուր 64 քառակուսի մետր), դասրասավել են «Սոլարեն» հայ-ամերիկյան ընկերության կողմից, աղահովում են 40 կՎտ հզորությամբ համարժեք էներգիա ջրասափացման համար՝ ընդհանուր առմամբ 5 անգամ քնեսեսելով ծախսվելիք էլեկտրաէներգիան: Դրանք աղակերպատ փոքր ջերմոցատիպ հարթակներ են, հասուկ սեխնոլոգիայով դասրասաված ներքին խողովակաՇարով: Արեւի ճառագայթներով սափացված ջերմափոխանակիչի միջոցով սափացվում է ջուրը, որն էլ իր հերթին լցվում է մեծ ջրակուսակիչի մեջ և մասակարարվում 7-

րդ սեխնիկական հարկում սեղադրված չորացումով հովացման և ջեռուցման սարք: Խողովակներով օղը դրսից զալիս է դեղի չորացումով հովացման ու ջեռուցման սարք և փոխանցվում դահլիճ:

Եվ հովացման, և ջեռուցման համակարգում օգտագործվող ջուրը սափացվում է արեային էներգիայով: Ի սարքություն բոլոր մյուս կոնդիցիոներների, այս համակարգը անընդհատ մաքուր, թարմ օդի ներհոս է աղահովում: Դահլիճի ջեռուցման և հովացման համար կիրառվում են նույն համակարգի սարքեր աՇխասանային ռեժիմները:

Այս ծրագրի նույնպես է ցուցադրել էներգիայի այլընտրանքային աղբյուրի՝ արեային էներգիայի օգտագործման հնարավորությունները Հայաստանում: